ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

ԳՐՔԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ. ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ Մ.Թ.Ա. VI-IV ԴԱՐԵՐՈՒՄ, ԵՐԵՎԱՆ, «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՀՐԱՏ., 2017, 148 ԷՋ:

Ռուսլան Ցականյան[1]

Վերջերս լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. թ., դոցենտ Հովհաննես Խորիկյանի հերթական մենագրությունը՝ խմբագրությամբ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Քոսյանի և պ. գ. թ., դոցենտ Ռ. Ղազարյանի: Հ. Խորիկյանի աշխատությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Իրանի և Հին Արևելքի բաժինների համատեղ նիստում և տպագրության ներկայացվել նույն ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Ինչպես հայ արևելագիտության, այնպես էլ իրանագիտության համար Հ. Խորիկյանի հերթական ուսումնասիրությունն անգնահատելի է: Այսօր, փաստացի Հ. Խորիկյանը Ք.ա. VI-IV դարերի մերձավորարևելյան և մասնավորապես Աքեմենյան դարաշրջանի պատմական աշխարհագրության և էթնոքաղաքական հարցերով զբաղվող եզակի մասնագետներից է: Կոնկրետ աշխատության խորագիրը կրող ուսումնասիրություններ որպես այդպիսիք՝ չկան: Այս ուսումնասիրությունը միտված է լրացնելու այդ բացը:

Հ. Խորիկյանի աշխատությունն առաջին հերթին աչքի է ընկնում մեծաքանակ փաստերի ուսումնասիրությամբ և

[1] Պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

եզրահանգվում են հեղինակի հստակ մոտեցմամբ: Հեղինակը վերլուծության համեմատական մեթոդը կիրառելիս խիստ գիտական մոտեցում է ցուցաբերում, ինչն էլ ավելի է ընդգծում աշխատանքի գիտականությունն ու ներկայացվող նյութի արդիականությունը: Հեղինակը, թեմայի շրջանակներում ջանասիրաբար հավաքել և ներկայացրել է բոլոր հասանելի սկզբնաղբյուրները, սկսած Աքեմենյան սեպագիր արձանագրություններից ու անտիկ հեղինակներից մինչև վաղմիջնադարյան հայ պատմիչների երկերը: Բավականին հագեցված է նաև մասնագիտական՝ հայերեն և մասնավորապես օտարալեզու մասնագիտական գրականության ցանկը, որոնք ամփոփված են ուսումնասիրության վերջում (էջ 138-146):

Պատմաաշխարհագրական բնույթի նյութից զատ մեծ տեղ է հատկացվել նաև հնագիտությանը, տարածաշրջանում ժողովրդագրական խնդիրներին, էթնոքաղաքական տեղաշարժերին, տնտեսական, հասարակական, կրոնական և բազում այլ տարաբնույթ ու տարատեսակ հարցերի քննարկմանը:

Փոքր Ասիայի բազմազգ և բազմացեղ տարածքներում Աքեմենյանները, որպեսզի կարողանային նվազեցնել կոնկրետ էթնիկ բնակչության հավանական ըմբոստությունը, և դեռ ավելին՝ որպեսզի պատեհ առիթի դեպքում հեշտությամբ կարողանան միմյանց դեմ տրամադրել սատրապության տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների՝ հաճախ մեկ սատրապության մեջ միավորում էին տարբեր ցեղերի ու ժողովուրդների: Մի հանգամանք, որն իր ընդարձակ մեկնաբանությունն է ստացել աշխատանքում: Այս երևույթն առկա էր նաև Նոր-ասորեստանյան պրակտիկայում:

Քանի որ Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ Փոքր Ասիա թերակղզին բաժանված էր չորս

սատրապությունների՝ գրախոսվող աշխատության հեղինակն իր մենագրությունը նույնպես բաժանել է չորս գլուխների, ընդ որում՝ ամենածավալունը ստացվել է I սատրապության գլուխը (էջ 7-56): Հ. Խորիկյանն այս գլխում հանգամանորեն անդրադառնում է ոչ միայն I սատրապության քաղաքական ու տնտեսական իրավիճակին, այլև՝ առանձին-առանձին ներկայացնում է I սատրապության վարչական յոթ ենթաշրջանները՝ Հոնիա (էջ 7-21), Կարիա (էջ 21-33), Լյուկիա (էջ 33-46), մագնեսյաններ (էջ 46-47), էոլյաններ (էջ 47-54) և պամփյուլացիներ (էջ 55-56): Հ. Խորիկյանը մանրամասն անդրադարձ է կատարում ամեն մի ենթաշրջանի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տեղ գտած բոլոր կարծիքներին և ճշգրտումներ մտցնում նրանց սահմանային խնդիրների վերաբերյալ: Ամեն մի ենթաշրջան վերլուծելուց հետո՝ տրված է նաև տվյալ ենթաշրջանի հակիրճ ամփոփումը, որն էլ ավելի է բարձրացնում հեղինակի կողմից նյութի մատուցման արժեքը: Առաջին գլխի ընդհանուր եզրահանգման մեջ հեղինակը նշում է, որ սատրապության ձևավորումը պայմանավորված է եղել մի կողմից տեղական առանձնահատկություններով, մյուս կողմից՝ որպեսզի արդյունավետ կազմակերպվի հարկատվության գործը, ինչպես նաև հաջողությամբ պաշտպանվել Փոքր Ասիայում բալկանյան հույների հարձակումներից (էջ 56):

Աշխատության երկրորդ գլուխը ներառում է II սատրապությունը (էջ 57-72), այն իր մեջ ներառում է մյուսիացիներին (էջ 57-58), լյուդիացիներին (էջ 58-60), լասոններին, կաբալներին և հյուտեններին (էջ 61-72): Այս գլխում Հ. Խորիկյանը բավականին դիպուկ է նկատում, որ II սատրապությունը կամ Լյուդիան բացառիկ նշանակություն է ունեցել և եղել է Պարսկական տերության հարուստ նահանգներից մեկը: Պայմանավորված Փոքր Ասիայում ռազմաքաղաքական

անկայուն իրադրության հետ՝ հեղինակը նշում է, որ սատրապության տարածքը պարբերաբար ենթարկվել է վարչական վերաձևումների. որոշ ենթաշրջաններ դառնում էին առանձին սատրապություններ կամ միացվում էին հարևան սատրապություններին (էջ 72):

Երրորդ գլուխը՝ III սատրապությունն է (էջ 73-117): Այս գլխում խիստ կարևոր է Կապադովկիայի տարածքի ու սահմանի խնդիրը (էջ 99-117), քանի որ այն արևելքից սահմանակցում էր Հայաստանին: Հեղինակը, բավականին ջանասիրաբար քննարկելով բոլոր առկա կարծիքները, հանդես է գալիս ուշագրավ եզրակացություններով: III սատրապությունն իր մեջ ներառում էր Փռյուգիան, Ասիայի թրակացիներին, պափլագոնացիներին, մարիանդիններին: Այստեղ մեծ տեղ է հատկացված Փռյուգիային: Փռյուգիայի տարածքով էր անցնում պարսից «արքայական ճանապարհը» իր 20 կայաններով հանդերձ (էջ 75): III սատրապության տարածքը, որը բավականին ընդարձակ էր ու բազմէթնիկ, նույնպես գտնվել է անընդմեջ վերաձևման մեջ (էջ 99):

Հաջորդ չորրորդ գլուխը՝ IV սատրապությունն է կամ Կիլիկիան (էջ 118-133): Այստեղ հեղինակը բավականին մեծ ուշադրություն է դարձնում Կիլիկյան սատրապության արևելյան և հարավարևելյան սահմանագծին՝ հստակեցնելով Սատրապական Հայաստանի հետ նրա սահմանները: Կիլիկիան Աքեմենյան Պարսկաստանի համար ունեցել ռազմավարական խոշոր նշանակություն, ինչն ըստ հեղինակի պահպանվել է Աքեմենյան տերության ողջ ընթացքում: Շատ ուշագրավ է Կիլիկիա սատրապության հյուսիս-արևելյան սահմանի վերաբերյալ Հ. Խորիկյանի դիտողությունը, ըստ որի հյուսիս-արևելքում երբեք չի հասել Մելիտենե, քանի որ հետագա Կոմագենե կոչված երկրի տարածքը մտել է Սատրապական Հայաստանի կազմի մեջ (էջ 133):

Աշխատությունն ունի հայերեն և անգլերեն ամփոփումներ, խիստ կարևոր է վերջին հանգամանքն, որը թույլ է տալիս օտարալեզու ընթերցողներին ծանոթանալ եզրակացություններին (էջ 136-137):

Հարկ ենք համարում նշել, որ աշխատանքի բացթողումն է տեղանունների ու անձնանունների ցանկի բացակայությունը, որը գտնում ենք մենագրության համար ցանկալի բաղադրիչ է: Աշխատության մյուս բացթողումը՝ քարտեզների բացակայությունն է: Կարելի էր ամեն մի սատրապության համար քարտեզներ կազմել, որն առավել ընդգրկուն կդարձների ընթերցողի պատկերացումը կոնկրետ սատրապության մասին:

Աշխատանքը հնարավորության դեպքում կարելի է թարգմանել անգլերեն՝ օտարալեզու գիտական հանրությանը ներկայացնելու համար, քանի որ նման բնույթի աշխատանք չկա նաև արտասահմանյան գիտական գրականության մեջ: